


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան Ծրք 10
Վեցամսեայ » 5
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՍ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան Ծրանք 12
Վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՍ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Կր հրատարակուի Շաբաթ օրերը : Ծա-
նուցման տողը 10 Սանդիս : Երկու ք/ու ա-
ռաջ հրատարակուած քերթը 40 Սանդիս :
2 հրատարակուած գրութիւնը եւ յսրուիր :

Հասցե
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

ԱԶԴ

ԱՌ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ

Եթէ կ'ուզէք որ տեղւոյս նորակազմ
Աղբատախնամը շարունակուի ու մեր աղբատ
հիւանդներն ու տնանկները խնամուին՝ ձայ-
ներնիդ հասած տեղը յորդոր կարգացէք այն
չբաւոր դասակարգին որ երբ Աղբատախնա-
մին դիմեն՝ քիչ մը քաղաքա վար ըլլան, տըր-
ուած հրահանգները յարգեն : «Թօքուզու-
մուն հագգը իջին» ըսելով՝ անամօթաբար
նախատինք չի տեղան այդ մարմնոյն գործոն
անդամներուն՝ ինչպէս որ կ'ընէին հիւանդա-
նոցի պաշտօնէից : Ինչո՞ւ Աղբատախնամն ալ
սրդողցնենք :

Պէտք է խրատել կարգ մը չբաւոր՝ բայց
ամբարտաւան մարդիկը ու տնանկ՝ բայց չըլ-
ծիկ կնիկները՝ որպէս զի խոհեմութեամբ
շարժին, որոնց պատճառաւ կը վախցուի որ
օր մը՝ հիւանդանոցը եղածին պէս՝ Աղբա-
տախնամի կեդրոնատեղին ալ կ'ուենն ծա-
գին :

Այլ պէտք է չի շողորթութել եւ խոս-

տովանիլ թէ մեր ժողովուրդին մէկ մասը
տակաւին անկիրթ է, երես տնուելիք բան
չէ և յաճախ արգելք կ'ըլլայ ազգաչէն գոր-
ծերու :

Այս տողերը գրելնուս շարժառիթն է
երկուշաբթի օրը Աղբատախնամի կեդրոնա-
տեղին ամբարտաւանի մը կողմէ տեղի ու-
նեցած մէկ անհաճոյ դէպքը, զոր չենք ու-
ղեր նկարագրել ընթերցողաց ալ նողկանք
չի պատճառելու համար :

Սոյն նորահաստատ ընկերութիւնը, որ
կոչուած է իր կարողութեան չտիովը օգնել
աղբատաց և սփոխել թշուառութիւնը, տես-
նելով Օրիորդ Ֆրայզըրի մեկնումը՝ որոշած է
«բացառիկ նպաստ» մըն ալ ընել կարօտե-
լոց, և չորեքշաբթի օրէն սկսեալ հարիւրէ
ուելի չբաւոր և անօգնական ընտանիքներու
հաց բաշխել սկսած է : Ուստի ինքնին կրնայ
հասկցուիլ թէ ընկերութիւնը, մանաւանդ
հիմա, ո՞րքան պէտք ունի ամենուս քաջալե-
րութեան և խրախուսանաց, որ միակ պայ-
մանն է ասանկ մարդասիրական մեծ գործի
մը կատարեալ յաջողութեան :

—o—

ՄԵԿՆՈՒՄ

Անցեալ շաբաթ օրը ժամը 3ին Ազն. Օրիորդ քանի մը օր Ալեքսան անուանեցաւ Ռուսճուգի ճամբով ի վիէնա եւ անկից ի լոնտոն :

Օրիորդը քանի մը օր Ալեքսան մնալով տեղւոյն նպաստաւտոյց յանձնաժողովներէն պիտի խնդրէ Պուլկարիոյ հայ գաղթականաց ալ նպաստելու :

Քաղաքիս կայանին մէջ ողջերթ մաղթելու համար կը գտնուէին Անգղիոյ և Աւստրիոյ գօնասիրները, Վառնայի քաղաքապետը ինչպէս նաև անդացի Հայ վաճառական դասը և երկսեռ գաղթականաց բազմութիւն մը :



ՂԵՒՈՆԴԻԱՆՈՍ

«Իրաւունք» շնորհ արարեալ, Տ. Ղեւոնդ քահանայ՝ մէկ աստուածաբանական նամակը կը հրատարակէ. նամակ՝ գրուած ներշնչմամբ 19րդ լուսաւորեալ դարու յառաջխաղացութեան :

Տ. Հայրը կը գրէ թէ իր պաշտելի Հայրիկին դիմեր է, իր անձին փրկութեանը միջոցներ հայցելով : Բայց Հայրիկը և միևնույն աստուածապատիւները ականջ չեն կախեր, հակառակ Ղեւոնդի. ԻԱ. գրութիւններու և նոյն իսկ քաջ Ձորափափելի : Եթէ Պ. Եփն աղգեցիկ աջակցութիւնը կանխապէս գրպանած ըլլար և ապա այս դիմումը ընէր, գուցէ անոր արդունաւոր ըլլար երեցկիւնակարօտ և կեղեցականին այս սրտաճմբիկ աղերսը :

Բախտը այսչափ է եղեր : Ուրախառիթ է սակայն որ Տ. Ղեւոնդ քահանան ուշաբերեր է. ինչ որ ամենէն խելական է : Բարի է ամեն ինչ որ բարի վախճան կունենայ կըսէ առակը. և յետոյ յանձնաբերէ մըն ալ Ռուսճուգիներուն է որ շատ կշտապինու վայելել կուտան կոր իրենց հացը ու աղը իրենց այրի քահանաներուն, ինչ որ, ըստ 19

դարու լուսաւորութեան, շատ յաւաքխաղացութիւններ գործել կրնայ տալ մարդու :

ՕՄԻՐԷ

Եգիպտոսի պաշտօնական լրագիրը կը հրատարակէ որ եգիպտական կառավարութիւնը հրահանգ տուեր է նաւահանգստի վարչութեան՝ ասկէ ետքը Աղեքսանդրիա հասնող գաղթականները չընդունիլ, ինչ աղգէ ալ որ ըլլան, մինչև որ իրենց ապրուստ ապահոված ըլլալին ապացուցանեն :

— Վախիթ մըն ալ էրթանք Մըսրը նստինք, — ըսողներուն ուշադրութեանը կը յանձնենք այս տողերը :

ԵՐԳ

ՍԻՐՈՅ ԺԱՄԸ

Սիրոյ ժամը հնչէ հանդարտ
Հմաք մըն է ամբողջ բնութիւն
Երկնից վրայ լուսինն արթուն,
Կը փայլի վերդ գլխոյ հպարտ :

Մովուն մակը անհուն սիրոց,
Կը տարածուի երկար ու լայն.
Իւ իր ալեաց ամեն մէկ ձայն,
Սիրոյ հրաւերն է ոսկեգոծ :

Կրնա՞նք մնալ մենք անտարբեր
— Թէ և ծովը, նոյն իսկ լուսին
Սիրոյ լեզուն մեզ չի խօսին
Երբ կը լսենք սրտին ձայներ :

Մահն է վերջը մեր կեանքի սին,
Նուա՞րդ սիրտդ իմ սրտիս բաց,
Կեանքի պարտէզը չի թռչնած՝
Ծաղկունք քաղենք մենք միասին :

O.

Գնումն և վաճառումն հին ու նոր ամէն տեսակ նամակագրութեան (բուլ), դիմել Հայրիկի խմբագրութեան :

ՆԱԽԱՊԱՀԱՐԱՐՈՒՄ

Վերջերս Ռուսներից ճուրճով քաղաքի աղքատ գաղափարգի բնակիչներէն մէկուն կինը զաւակ մը կը ծնի: Նորածինին բերանը անմիջապէս բացուելով՝ տարօրինակ ձայնով մը սա խաբէրը արտասանել է եղեր:

«Նա աշխարհ կեայ ձեզի ինչպէս նաեւ բոլոր աշխարհի իմացնել թէ աշխարհիս վերջը եկած է, որոյ յայտարար նշանները քանի մը տարիներէ ի վեր կը տեսնէիք ուստի պատրաստ կեցէք. աշխարհի այս վերջաւորութեան ժամանակ մինակ ես որջ պիտի մնամ»:

Այս յայտարարութենէն ետքը բերանը գոցուելու եւ նորածինի պէս սկսելու «ընդամենը» պոռալ: Ու ճուրճովցի կանանց նախապաշարեալ գաղափարով բաղնիք ելլելով ետքը իրիկունները պատանքը գլխուն տակը դրած կը պոռկի եղեր:

Բոժ. — Աստուած շատ քաջել չի տայ:

ՄԱՌՇ ՄՕՇՕՆԻՅԷ

Անցած միտակի գիշեր հաճի Բանագոյի զբօսարանին մէջ Ռուսէն նուագածուհիներու խումբը մեր «Արիք Հայկազունք»-ի եղանակը կը նուագէ ու ներկայից գոհունակութիւն կը պատճառէ. խմբին օրիորդներէն մին երբ փառաւահ հաւաքելու համար ծառի մը տակ նստող երկու անձերու կը ներկայանայ՝ որոնք հրեա են եղեր՝ մէջերնին սա խօսակցութիւնը կ'անցնի:

— Մամազէ՛լ, պու շիմտիքի չալտիյնիդ մառչ նէ՛ մառչի խոի:

— Մարչ Առմէնիէն:

— Նա՛սին:

— Մառչ Առմէնիէն:

Ընկերոջը նայելով՝ եւ ծաղրածու եղանակաւ. — Ասէպի վաեօ չիպ Եօթում, իեօ նօնսէ մառչ առմէնիէն:

— Սի՛ սինեօր սի՛:

Ասոնցմօտ նստող երկու հայեր խօսքի

կը խառնուին:

— Նէ՞ թատաճիւպ խախօսընը սինեօր:

— Չունգու, բարտօն, էռմէնիին էլչի-սի եօգ քի մառչի տա օյսուն:

— Էյ սիլին էլչինիլ վա՛ր քի մառչընը տա օյսուն:

— Պիզիմ՝ մարչիմիլ մի՛:

— Էվվէթ, էկէր պիլմէպէնիլ չըղթ-տրալըմ՝ տա տիյնէին, — ըսելով՝ նուագածուհիներուն կը հրամայեն հրէական հետեւեալ մառչը զարնել:

Հալուիլ մէզալանիպա

քեալի՛ մանէսէ՛:

Ավաի՛ն եալօլաոօ

Միլինտօ առէն:

Պալաթ գարիսինտա

Պէն եօտտում՝ օնի,

Մալի տիւ շայվառի

Պէյաղ տիւ տօնի:

Ալ կրնաք երեւակայել ունկնդիր բազմութեան ձգած քահրահ, իսկ երկու մօշօնները ամօթահար կը կծկեն:

ՀԱՆԵԼՈՒԿ

Թիւ 11

Երեսուն արարած կան տեղ մը,

Մէջերնուն պակաս է կոիւր:

Կէսը սեւ իսկ կէսն է ճերմակ,

Պատճառ եղողը ո՞վ է հիմակ:

Վ.

Թիւ 10 Հանելուկն էր,

Սեղ եւ իւր բոյր կարգուեցան,

Ադամ Եւայ չի հանեցին ձայն:

Հ. Ս. Զարդարեան:



ԱԿՆՈՑՍ

(Թերեւսօրիկի մը վայրկեցապէս)

Ա.

Դպրոցէն ելոյ չելայ՝ ըրի բոլոր այն բաները որոնց դուք « շիքնալ » կըսէք : Մէջը ճեղք գլխարկ, ուսկէսքիէն օձիք, ճերմակ էսքառքին, կէթո՛ւ, շաւր գռաված, պու- թօնիէն ֆլէտի, ժիլէի տեղ սե մետաքս գօտի, կո՛ւ—բէռլ ձեռնոց, լաստիկի պէս քալուածք, թու՛թ՝ ալաշիք : Եւ առանց էս- մերեանի մը դիմած ըլլալու ակնոց գնել ըս- կայ, 5 խուռուշնոց զոյգ մը ապակիներ որ աչքիս վայն ի վրան բերին :

— Ինչո՞ւ այդ ամենքը, պիտի ըսէք :

— Որովհետեւ ուրիշները անանկ կը- նէին :

Բ.

Զեմ՝ յիշեր ո՛ւր պատահեր էի ես ա- նոր, միայն սաչափը գիտէի որ ունեցած փրսոր մը խելքս ալ վրայ էի տուեր, ու ի- ընն նկատմամբ կ'զգայի բան մը որ անուն չունէր ինծի համար, և որուն դուք « սիրա- հարուի՛լ » կըսէք, ի՞նչ :

Մինչև ան ատեն (քիչ մը փափուկ խօ- սելով) իմ կոյս հոգիիս վրայ ուրիշ սերի մը ստուերն իսկ չէր փռուած :

Հիմա սերս ան աստիճան զեղուն էր լանջքիս տակ՝ որուն յորդիլը բան մը չէր :

Գ.

Ի՞նչ հարկ երկար բարակ պատմել ձեզ հոգիիս կրած լլկումները, գիշերուան քունիս աքսոր երթալը, իմ երկչոտ փափաք- ներս ու իր տունին առաջքի գիշերային բէ- րիչա՛ն դեգերումներս. հերիք է որ ըսեմ ձեզի թէ 23 Մայիսներս, միշտ անքիէն համբարուած դէմքս ու ոսկի թելով (?) շիք pince-nez (որուն անգու՛թ աքցանին տակ քիթիս սեմէրը կը հառաչէր) դեր մը խաղ- ցած էին անոր վառ յիշողութեանը մէջ :

« Ան քուկին խուռուշնո՛ւն է » պիտի ըսէք, թերեւս . . . :

Դ.

Դիպուածը ա՛տչափ աղւոր ժպտած չու- նէր ինծի :

Ն . . . եանէնց սուառէին պատահեցանք իրարու :

Պար, պար, պար : Սրունքներուս հար- ցուցէք թէ ի՛նչ քաշեցին ատ գիշերուան ցատ- կըտուերին, ու բերնիս՝ որ գիտցաւ սիրուն- օրէն marivaudagն ընել աւուր մօտիկ :

Ե.

Մաղիկներ կան որոնց ո՛չ անուն ունե- նալին յայտնի է և ոչ հոտ, ինչպէս աչքեր որոնք բան կ'ըսեն քեզի, այո՛, ու բա՛ն մըն ալ չեն ըսեր :

Իր նայուածքը կասկածոտ և անհանգիստ կ'ընէր զիս : Արդեօ՞ք . . . : Բայց վերջապէս ատ անուշ աչուքները մտածել կուտային ինծի խել խօլ բաներու վրայ :

Զ.

Ավէք թիւպ սիկառ մը բերանս՝ մինակս կը պտտէի դուրսի սալօնը որ ամայի էր հիւս, երբ ինքը ոտքի ու նուաչի ժխորէն դուրս ցայտեց յանկարծ, յոգնած կարմրած, փետուր էվանթայովը երեսի կրակը մեղմելով :

— Ներեցէք Օրիորդ, ըսի մէկէն, դէպ ի իրեն յառաջանալով. պիտի ըսէի որ . . . Ի՞նչ պիտի ըսէի, ես ալ չգիտեմ, բայց իր տէլի- սիէօ՛ կերպարանքը, տէքովթէ լանջքն ու քլօշ ժիւբին հեւքօտ ֆուռֆուռն պահ մը մոռցը- նել տուին ինծի « պատշաճից օրէնքները » :

. . . Հաղիւ իր էյֆէլ գանգուրներուն ճակտիս մեղմիւ հպիլը զգացի, ու այն ի՞նչ բոցէ շրթունքներս գգուելու վրայ էին այ- աերուն վարդը, երբ հովահալն կը գոցուի ու իր ոսկորի կրնակը շա՛բբ . . . հարուած մըն է կը փակցունէ երեսիս : Այս ամէնքը քաղնէօ- վական գիւրաշարժութեամբ մը :

Է.


Անոցիս ապակին ճաթած էր ու քիթս սկըթուած :

Հիմա որ տարին, հոգե... աւելի իսկ անցած է անկից ի վեր, քիթս պահած է գեռ իր նշանը, ու ես պահած եմ կոտրած pince-nez-ս «ի յիշատակ»:

Եւ դո՛ւք, ակնոցակիր ժէճն—ժաններ, երբ օրին մէկը սատանան փոքերնիդ մտած՝ ձեզի ստանկ բանի մը թելադրէ, ամէն բանէ առաջ չի մոռնաք ակնոցնիդ հանելու:

Գալով այն քիչ մը բիրտ շարժումին — զոր կրնայ ըլլալ որ ընդունիք, — յաճախ սապէս կը թարգմանուի կենցաղագէտ երիտասարդներու պորտան. «Չեմ ուզեր, պերճեպըս ձգէ...»:

Իւսկիւսար

Ընդօրինակեց
ԹէՌԴԻԿ

Հայր մը՝ իր գիշերօթիկ որդւոյն կը գրէ.

Սիրելի որդեակ,

Քու վրայ ստացած տեղեկութիւններս զիս շատ կը տխրեցնեն: Սաստիկ բարկացած եմ քեզի դէմ: Ընթացքովդ կապացուցանես թէ կատարեալ էջ ես:

Հայրդ...

Դարձեալ սալոր մըն ես կերեր, անպիտան, պոռաց բարկութեամբ նպարտաւաճառը իր աչկերովն.

— Ոչ, վարպետ, ես չի կերայ...

— Ահա կուտը դեռ տախտակամածին վրան է:

— Ուրեմն ես չեմ... որովհետեւ վարպետ, երբոր ես ուտեմ, միշտ կուտերը մէկ տեղ կը կլլեմ:

Ցնծա՛ւ ուրախ լեր որդեակ, կըսէր քահանայն՝ շղթայակապ մահապարտի մը, մը-

խիթարուէ՛, զի այս գիշեր իսկ երկինքի մէջ հրեշտակներու սեղանակից պիտի ըլլաս:

— Իրաւունք ունիք, տէր հայր, բայց գիտնաք որքա՛ն երախտապարտ պիտի թողուք զիս, եթէ հաճիք դուք երթալ իմ տեղս... որովհետեւ կ'երգնում թէ՛ բնաւ անօթի չեմ:

Տարօրինակ կտակ մը.


Ծերունի մը որ իր բոլոր կեանքը զըլարդ անցուցած էր, նոյն իսկ ամենէն ձախող օրերուն մէջ, մահուան սեամին վրայ եւս նոյն մարդը մնաց. իր կտակին մէջ յատկապէս պատուիրելով որ իր յուղարկաւորութեան թափօրին ընկերացող նուագածունները երբեք չի նուագեն սովորական տխրունագ քայլերդ-ները. կը պատուիրէր որ հեշտին եւ ոգեւորիչ եղանակներով առաջնորդեն զինքը իր վերջին բնակարանը:

Ծերունին կը մեռնի ու եկեղեցական արարողութիւններէն ետքը տխուր թափօրը ճամբայ կ'ելնէ ի ձայն ամենէն ժողովրդային քօլֆաներու և մազոֆաներու:

Դուք դատեցէք այս թափօրին դէմը եւնող անցորդներուն ապշութիւնը: Օ.

ՆԿԱՐՀԱՆՈՒԿ ԹԻԻ 3

Ա ը ը Ա Ս ա մ մէ զգ կը



և Ա

խանի

Ա. անսխալ կարգացողին նուէրն է մէկ ամսուան «Հայերի»:

Թիւ 2 Նկարհանուկը կարգաւ այսպէս.

«Երանի աւելորդապաշտ չեղողին»:

Անսխալ կարգաց Տիար Պետրոս Թագաւորեան:

ԹԱՊԼԱՔԵԱՐԻ ԴԱՆԻԿ ԱՂՏՕՐ
ՃԻՒՄՊԻՒՇԸ

(Շարունակություն)

— Վոյ ճանճմ Դանիկ արարար, բէք
թօհաֆ կըսես:

— Թօհաֆ չէ, րաճօնճազ կըսիմ:

— Էյ տահա վիճակ պիտի ըսե՞նք,
չէ նէ սուֆրան գնենք, հիմա ուր է նէ լե-
ւոնը խուզին կը բերէ ֆուռունէն:

— Էֆէնտըմ, խուզիին փուռէն գալէն
սըղրա՝ սօֆրային թէտարիքը կու նայինք:

— Բէք աղէկ:

— Հըմայեկս շիշման հանումէն րիճա
կանիմ ուր՝ պայպական վիճակ մը ըսէ, մը-
տօքս մէկը բռնե՞ր եմ:

— Սիմա հանըմ, վիճակ մը ըսէ:

— Քա իրաւոր ես անտար վիճակ չիյ-
տեմ:

— Շիշման հանում, քերէմ ու հիմ-
մէթ արէ, սախըզ մի ծամէ:

— Սիմա հանըմ, արթըն ճար չի կայ,
պիտի ըսես:

Սիմա հանըմ քանի մը վայրկեան մը-
տածելէն ետքը.

Պահչէլէրտէ սարը չիչէք,

Զիւլֆիւնէ գօնմուշ պէօճէք.

Վարըն սօրուն եարիմէ

Սէվէր մի պէնի կերչէք:

— Վա՛յ էֆէնտըմ, ո՛ր մախլուգին
բերնին է մոնացեր քերի ճիտտէն չի սի-
րելը:

— Դանիկ աղբար, մէկ հատ մըն ալ
ես պիտի ըսեմ, միտքդ մէկը պահէ:

— Պահչեցի էֆէնտըմ:

Քէթէն կէօմէք պէշ էնտէն,

Նէ՞ թէզ օսանտըն պէնտէն.

Օսանտըղըն պիլսէիտիմ,

Արզում ալըրտըմ սէնտէն:

Այս միջոցին յանկարծ սենեակին դու-
ռը բացուեցաւ եւ Վառվառ հանըմին տան-

տէրը ներս եկաւ «հայր օլոուն», ըսելով:

— Պոլյուրուն, պոլյուրուն, գոչեց
Վառվառ հանըմ, բաղմոցին վրայ տեղ ցու-
ցունելով անոր:

Դանիկ աղբօր սիրտը նետից ու տըրտ-
մեցաւ, վասն զի տանտիրոջ ներկայութիւնը
տաք ապուրին մէջ պաղ ջուր կը լեցնէր, բայց
ճար չի կար, պէտք էր համբերել: Ու երբ
տանտէրը իր քովը նստեցաւ, քթին տակէն
ըսաւ անոր.

— Սէֆա կէլտինիզ էֆէնտըմ.

— Սէֆա պուլտուգ գօմշու:

— Վարվար հանում, աս մարդը շատ
տի նստի՞ ֆէօս.

— Չէ, չէ, հիմա կերթայ. արտատա
հեղ մը մեղի կը հօվուէ:

— Էկէր չերթայ իսէ՞ օլաուլումա մեծ
քէթէրիզ մի է մեղի:

— Դուն հոգ մընէր, ես անիկա հի-
մա ճամբու կը գնեմ:

Տանտէրը սխաւ սիկար մը բաթտել.

— Ինտո՞ր տի ճամբիս չի գիտիմ, հէ-
րիֆը ֆսֆսուկ կու բաթտէ:

— Աղջիկ բուրմինէ գնա կրակ մը բեր
ու սե ջուր մը եփէ:

— Էֆէնտըմ ի՞նչ պէտք է ատանկ թա-
խըմ մի պօշ թանթանաներ, բնցուր արէք
էրթայ:

— Գուզում աղա, շու տիշարքի սա-
լօն ագընօր. այագ գապլարըմըզ հէփ ըս-
լանըրօր, պոլնուն պիր չարէսի եօգ մու.

— Հը՛հը, նասը՛ կօգ, շիմտի պա-
գարըզ. կէ՛լ կէօսթէր:

Ու Վառվար հանըմին հետ սենեակէն
դուրս ելաւ:

Դանիկ աղբարը երկայն շունչ մը առաւ.

— Էֆէնտըմ, երկյ մարդոց երես տա-
լու ըլլանք իսէ՞ միտէրնին կու բուսին:

— Չէ, աս անանկ մարդ չէ:

Քանի մը վայրկեան անցնելէ ետքը Վառ-
վառ հանըմը ներս եկաւ: Տանտէրը ճամբու
դուրս էր: Այս միջոցին լեւոն ալ փուռէն
կը վերադառնար՝ խորոված ուլը բերելով:

(Շար.)

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԱԺԱՆԱ ԲՈԺՈՒԹՅԱՆ ԵՐ ԸՆԿ՝

Պաղեստին

Սահմանագրվելու համարում հրեաները այս առաւելում չորս կողմէն յարձակեցան . . . չիք ող պալըղիններուն վրայ ու մեծ ջարդ տուին անոնց :

Պոլիս

Խառնակի հւ գուգիունձուգի հրեաները երեք պարկ խապալի կուտով տասը պարկ ակապիճիկո զրկեցին այս պահուս Պաղեստինի շրջակաները . . . գինիին հետ պատերազմող մօշոններուն համար :

Բիրիբաշա

Եռամուրթալը Բինկէզ պալըղին Բ կարգի շքանշանը տրուեցաւ պատերազմական նախարար լաքերտաճի չիպ խաւամուտանին :

Գուգիունձուգ

Խառնակէլա սանտըղին իր սակը 100ին 10 բարձրացուց :

Պալաթ

Քէֆալ պալըղին նախաձերնութեամբ հանգանակութիւն մը բացուեցաւ . . . ձուկերուն մէջ :

ՕԳՏԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Լուերը (Բիրէ) ջնջելու միջոց :



Ամառ գիշերներ մեզի քնոյ քաղցրութիւնը վայելել չի տուող լուերուն ձեռքէն կրնանք ազատիլ հեռեւեալ կերպով .

1. Ամէն անգամ որ ննջարանին գետինը պիտի աւլուի, պէտք է աւելը քացախով թրջել . լուերը չեն ախորժիր անոր հոտէն ու կը փախչին :

2. Ինչիւն ըստած խոտը աղէկ մը խաշելէ ետքը նոյն ջուրով աւելը թրջել ու անանկ աւլել պէտք եղած տեղերը :

ԱՆԺԵԼԻԲ

Գիտական Զրոյանք



ԱՊԱՐԴԻԻՆ ԶԱՆԲ

Պատկերին մէջ տեսնուած ձեռով ձերքերնիդ բացէք ու մէջտեղը ֆրանք մը դնելէ ետքը առաջարկեցէք ձեր բարեկամներէ մէկուն որ հագուստ մաքրելու յատուկ խղանտիով մը ձեռքերնիդ խողանակէ . միանգամայն խոստացէք որ եթէ յաջողի խողանակելով ֆրանքը վար ձգել՝ զայն իրեն պիտի պարգեւէք : Ապահով եղիք թէ չպիտի յաջողի . մինակ պէտք է նախապէս իմացնել թէ խողանակն ուժով, այսինքն զարնելու պէս չի տարուբերէ, այլ մեղմիւ շարժէ, զի եթէ զարնելու պէս ընէ՝ ոչ թէ միայն ֆրանքը կ'իյնայ՝ այլ ձեռքերնիդ ալ կը ցաւցունէ :

ԶԲՕՍԱՆՔ

Եղջերուի գլխուն մէջ որսորդին գլուխը գտնողներն են .

Տեառք Հրանտ Ալեանագեան . Լեոն Գարթալեան . Ներսէս Քիւչիւքեան :

Ռուսձուգէն Տիրան Ենովք .

Սիլիսդրէէն Կարապետ Յ. Յակոբ :



Պաղեսիկի արմազ իշիւն՝ Բոժոժիկին քահրք գոնանսարկեսա օրայա կիսե-
մէք Մօշօնայիէր քապուրունըն քաալիմի.



Բոժ. — Օն իքի նիզամ էսկի շարայ սօ՞ղոնը :

Ա. Զ. Դ.

ՏՕՐԹ, Ե. ԹՈՎԱՐԱՍԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հա-
սարակութեան թէ վերագարձած է Սօֆիսէ
և կընդունի հիւանդներ ամեն օր իր տունը
ի Պալըգ Բաղար, առաւօտները ժամը 10էն
12, իսկ կէս օրէն վերջը 2էն 5: Չորեք-
շաբթի օրերը կէս օրէն վերջը ժամը 2էն 5
ձրիապէս կը դարմանէ: 1—10

Այցեւորման, հասցէտոսս. նամակա-
գլուխ, հրաւիրատուն, բարենիշ, տոմ-
սակ, ևայլն ևայլն թէ՛ պարզ և թէ՛
ոսկեզօծեալ սէկ քանի գոյներով կը տը-
պագրուին: Քաղաքներէ եկած յանձնա-
րարութիւնք փութով կը կատարուին:

Գլխի գոհացուցիչ: Դիմել Հայերի խըմ-
բագրութեան:



ՄԵՔԵՆԱՅԻՑ ԳՈՐԾԱՐԱՆ



(ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Գ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ և Բ. Է. ԲԱՆՉՈՒՓ
Վառնա ճրգ թաղ ելտըլ թապիա

Ամէն տեսակ մեքենաներու շինութիւն և
նորոգութիւն, ջաղացքի թէ՛ շոգիով և թէ՛
պարզ ջուրով գործող մեքենաներ, նաև շո-
գեմակողներ. ջաղացքի վերաբերեալ ամէն
տեսակ երկաթեայ գործիքներ, գրամական
գասաններ, շէնքերու յատուկ երկաթեղէն-
ներ, տեսակ տեսակ ջրհաններ ևայլն ևայլն
կը պատրաստուին: Պատ. Յաճախորդք միշտ
գոհ մնացած են սոյն գործարանի շինու-
թիւններէն:

Оговоренъ редакторъ: Н. Драгулевъ
Печатница „Взаимность“ — Варна